



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

6 հունիսի 2014 թվականի N Մ- 536 - Ա
քաղ. Երևան

**«ՎՈՐԼԴ ՎԻՖՆ ԻՆՅՎԵՍՏՄԵՆՏՆԻ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ
ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ՄԱՐՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՀԱՄԱՐ
ՏԱՇՏԱԿՆԵՐԻ ՄԱՍԿԱՐԱՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2014 թվականի մայիսի 20-ի N 07/07.1/2579-14, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի մայիսի 16-ի N 3/3.8-2/7358-14, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2014 թվականի մայիսի 20-ի N 02/3281-14, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2014 թվականի մայիսի 16-ի N ՄԿ/ԳՂ-2/2460-14, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2014 թվականի մայիսի 19-ի N ՎՄ/Յ-4/6096-14 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի 2014 թվականի մայիսի 15-ի N 01/2170-14, եզրակացությունները, **որոշում է.**

1. Բարեգործական որակելի «Վորլդ Վիժն Ինվեսթմենթս» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի ոռոգման ցանցի վերանորոգման համար տաշտակների մատակարարում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ Վիժն Ինվեսթմենթս» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի

Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարան:

ՆԱԽԱԳԱՀ



Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ